

ԱՊՐԻԼ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ






1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	10
1.3. Ջրահեռացման համակարգ	11
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	12
1.5. Էներգահամակարգ	12
1.6. Մեքենա-մեխանիզմներ	13
2. Առևտրային տնօրինություններ	14
2.1. Բաժանորդների տվյալներ	15
2.2. Հասույթ	15
2.3. Գանձում	17
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	17
2.5. Ջրաչափեր	19
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	20
3. Տեխնիկական տնօրինություն	21
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	22
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	23
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	25
3.4. Ջրատար համակարգի բարելավում	25
3.5. Գոտիավորման աշխատանքներ	26
4. Լրատվական ծառայություն	28
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	31
5.1. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	32
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	33
6.1. Համակարգչային ցանց	34
6.2. Բնտերակտիվ համակարգ	34

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարաորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան



Ռ. Մելիքյան փողոցի ջրամատակարարման սխեմա

● Ռոմանոս Մելիքյան փողոցում գոտիավորման աշխատանքների շնորհիվ $D=80$ մմ ջրագծին միացված $D=50$ մմ ջրագիծը խցափակվել է: Արդյունքում տնտեսվել է $Q=4$ լ/վ ջրաքանակ, շահագործումից հանվել է $L=100$ մ վթարային ջրագիծ:

● Կոմիտաս 23 փողոցի շենքի $D=100$ մմ պողպատե ջրագծի վրա գոտիավորման աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է $Q=20$ լ/վ ջրաքանակով վթար: Այն վերացնելու նպատակով շահագործումից հանվել է $L=90$ մ վթարային ջրագիծ:



Կոմիտաս 23, 23/1, 23/2 և 25 շենքերի ջրամատակարարման սխեմա




Շիրազ-Չանիբեյյան փողոցների խաչմերուկի ջրամատակարարման սխեմա

● Մաշտոց տեղամասի Շիրազ-Չանիբեյյան խաչմերուկում գոտիավորման աշխատանքների արդյունքում $D=150$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է $Q=7,5$ լ/վ ջրաքանակով վթար: Արդյունքում շահագործումից հանվել են 2 հատ $D=50$ մմ անհայտ ջրագծեր:

● Շոպրոնի փողոցի $D=400$ մմ թուջե ջրագծի վրա գոտիավորման աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել է $Q=3$ լ/վ ջրաքանակով վթար, որի վերացման արդյունքում ցանցում բարձրացել է ջրի ճնշումը, վերացել են ջրի ճնշման հետ կապված բազմաթիվ բողոքներ:

- Թաղևոսյան 12/6 շենքի մոտ գոտիավորման աշխատանքների շնորհիվ $D=100$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Այդ ջրագծի խցափակման արդյունքում տնտեսվել է $Q=2$ լ/վ:



Թաղևոսյան 12/6 շենքի ջրամատակարարման սխեմա

- Նորք Մարաշ 13 փողոցում տեղամասի աշխատակիցների կողմից իրականացված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է քայքայված $D=50$ մմ պողպատե խողովակի $L=100$ գծ/մ երկարությամբ հատվածը և կառուցվել է $D=63$ մմ $L=100$ գծ/մ երկարությամբ նոր ջրագիծ: Թվով 4 բնակիչ բաժանորդների ջրաչափերը փոխարինվել և տեղափոխվել են տարածքից դուրս տեղադրված ջրաչափական դիտահորերում: Իրականացված աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ $Q=3,0$ ր/վ ջրաքանակ:



- Ա. Բակունցի փողոց թիվ 12 շենքի $d=200$ մմ կերամիկական կոյուղագիծը, որի վրա կառուցվել էին ավտոտնակներ, կոտրվել էր շինությունների ծանրությունից և չէր շահագործվում: «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից կերամիկական կոյուղագծի $L=42$ գծ/մ երկարությամբ հատվածը փոխարինվել է $D=200$ մմ պոլիէթիլենային ծալքավոր երկշերտ խողովակով, վերակառուցվել է թվով 1 դիտահոր և իրականացված աշխատանքների արդյունքում կոյուղագիծը գործում է նորմալ:



Քաղաք Արմավիր

- Բաղրամյան փողոցում գոտիավորման աշխատանքների շնորհիվ $D=150$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել է $Q=3$ լ/վ ջրաքանակով վթար: Վթարի վերացման արդյունքում ցանցում բարձրացել է ջրի ճնշումը, վերացել են ջրի ճնշման հետ կապված բազմաթիվ բողոքներ:



Բաղրամյան փողոցի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Գյումրի



209 տնակային ավանի ջրամատակարարման սխեմա

Գյուղ Ախուրյան

● Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Ախուրյան համայնքի՝ Գյումրու խճ. 74 շենքի բակում տեղի ունեցած խոշոր վթարավերականգնողական աշխատանքներին զուգընթաց ուսումնասիրվել է D=100մ տրամագծով պողպատե ջրագիծը: Այն հանդիսանում էր նաև վերը նշված շենքը սնուցող ջրագիծ, իսկ այն հարցը, թե տվյալ ջրագծի շարունակությունը որ ուղղությամբ է գնում և ում է սպասարկում, ուսումնասիրվել է գոտիավորման բաժնի աշխատակիցների կողմից: Պարզվել է, որ այն ձգվում է դեպի Ե/Գ Բանավան, որտեղից էլ նախկինում սնուցում է ստացել: Ներկայումս սնուցումն իրականացվում է Արցախի ջրագիծ կոչվող D=250մ պողպատե ջրագծից: Որոշվել է այն խցափակել հենց վթարված վայրից: Արդյունքում շահագործումից հանվել է D=100մ L=2100 մ պողպատե խողովակաշար՝ տնտեսելով 2 լ/վ ջրաքանակ:



Գյումրու խճ. 74 շենքի ջրամատակարարման սխեմա

Քաղաք Սևան



Սևանի շուկայի ջրամատակարարման սխեմա

● Նաիրյան փողոցում իրականացված վթարադրոնողական աշխատանքների արդյունքում շուկայի մեջ D=50մ տրամագծով խողովակի վրա, հայտնաբերվել է 1,5 լ/վ քանակությամբ վթար:



● Նաիրյան փողոցում գտնվող սպորտ-դպրոցի մոտ $D=220$ մմ PE և $D=200$ մմ թուջե խողովակների միացման կետում առկա վթարը հայտնաբերելու նպատակով իրականացվել են գոտիավորման աշխատանքներ, որոնց արդյունքում հայտնաբերվել է $Q=0,9$ լ/վ ջրաքանակով վթար:



Նաիրյան փողոցի ջրամատակարարման սխեմա



● Շինարարներ փողոցում իրականացված վթարաորոնադական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է դիտահորի մեջ լցվող վթար՝ $Q=0,2$ լ/վ քանակությամբ:




Շինարարներ փողոցի ջրամատակարարման սխեմա

● «Գոմաձոր» ՕԿՁ-ի մուտքագծի վրա՝ մշակովի հողատարածքի մեջ, հայտնաբերվել է ապօրինի միացում: Այն խցափակվել է, տնտեսվել է $0,2$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Վանաձոր



● Վանաձոր քաղաքի Գր. Լուսավորիչ 4 շենքի ջրամատակարարման խողովակի պարբերաբար կրկնվող վթարներից խուսափելու համար փոխարինվել է $D=50$ մմ, $L=6$ խողովակ, որի արդյունքում տնտեսվել է 1 լ/վ ջրաքանակ:

Գր.Լուսավորիչ 24 շենքի ջրամատակարարման սխեմա

Շիրակի մագր, գյուղ Լենգեսավան


● Գոտիավորման բաժնի և Շիրակ տեղամասի կողմից ուսումնասիրվել է Լենգեսավան համայնքի ջրամատակարարման ցանցը: Բանավանը, որը կառուցվել է հետերկրաշարժյան տարիներին հարևանությամբ գործող Գյումրի ՀԵԿ-ի աշխատակիցների համար, իրենից ներկայացնում է ժամանակավոր կացարաններ, որոնք տարիների ընթացքում կամաց-կամաց քանդվում էին, իսկ ջրամատակարարման ներքին ցանցը բնակիչների անհետևողականության պատճառով մնում էր բարձիթողի վիճակում: Բանավանի մի հատված ամբողջությամբ ապամոնտաժվել էր, իսկ սնուցող ջրագիծը և ներքին ցանցը դեռևս առկա էին և գործում էին: Դրանց վրա կային բազմաթիվ մանր վթարներ, ուստի որոշվել է այն ուսումնասիրել և ամբողջությամբ հանել շահագործումից: Արդյունքում շահագործումից հանվել է $D=50$ մմ $L=250$ մ խողովակաշար: Տնտեսվել է 4 լ/վ ջրաքանակ:



Լենգեսավան թաղամասի ջրամատակարարման սխեմա

Արարատի մագր

● Այնթափ համայնքի 17 փողոցով իրար զուգահեռ անցնող $d=50$ մմ և $d=63$ մմ $L=900$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակները գտնվում էին քայքայված վիճակում և հաճախակի էին կրկնվող վթարները: «Մասիս» տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=63$ մմ $L=450$ գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով նոր ջրագիծ և հին ջրագծից սնվող թվով 14 բաժանորդների սահմանագատման կետերում տեղադրվել են նոր ջրաչափական դիտահորեր և ջրաչափեր: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=50$ մմ և $d=63$ մմ $L=900$ գծ/մ ջրագիծ, ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը, բարձրացել է ջրագծի շահագործման հուսալիությունը, կրճատվել են շահագործման ծախսերը:



Ապրիլ ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1489
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	30,870
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	22,270
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	10,100
Ջրաչափական հանգույնցներ ուսուճասիրություն, սխեմաների կազմում	հատ	6
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4400.8
Կառուցված ջրագիծ	մ	1720.3
Կառուցված կոյուղագիծ	մ	225.5
Վերացված գաղտնի վթարներ	հատ	70
Փոխարինված փական	հատ	12
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	109
Մաքրված դիտահոր	հատ	687
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	144.7
<i>Վերացված վթարներ</i>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	957
Ջրահեռացման ցանցում	հատ	2407
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	727

Ապրիլ ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	444	806	253

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է ապրիլ ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքները	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	68	4	2	2	1	0	0	0	0	77
Փոխարինված	84	4	1	0	0	0	1	1	0	91
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	18	5	0	1	0	0	0	0	0	24
Ընդամենը	170	13	3	3	1	0	1	1	0	192

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 192 ջրաչափ: Կատարված աշխատանքների 89%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ԶՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մարտ ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	2480	228	18
2	Մաշտոց	2610	249	54
3	Շահումյան	2015	189	15
4	Զեյթուն	810	193	0
5	Շիրակ	990	538	0
6	Ալավերդի	0	62	0
7	Ապարան	0	32	0
8	Արթիկ	2640	20	48
9	Աշոցք	200	10	6.5
10	Բերդ	80	18	4
11	Իջևան	665	27	0
12	Լոռի	2910	203	2
13	Նոյեմբերյան	945	26	0
14	Սպիտակ	350	27	0
15	Ստեփանավան	50	15	0
16	Թալին	0	27	0
17	Տաշիր	250	12	0
18	Էջմիածին	0	151	0
19	Չարենցավան	520	64	0
20	Աբովյան	2930	88	0
21	Հրազդան	3090	120	0
22	Աշտարակ	2390	17	0
23	Կենտրոն	0	245	411
24	Հյուսիս	50	184	0
25	Հարավ	0	307	0
26	Էրեբունի	240	156	0
27	Արմավիր	0	102	0
28	Արտաշատ	0	86	0
29	Արարատ	700	70	0
30	Մասիս	0	52	0
31	Գավառ	725	22	0
32	Սևան	440	63	0
33	Մարտունի	0	23	0
34	Վարդենիս	10	14	0
35	Ճամբարակ	0	15	0
36	Դիլիջան	0	21	0
37	Վայք	0	17	0
38	Եղեգնաձոր	0	9	0
39	Ջերմուկ	0	17	0
40	Սիսիան	0	64	0
41	Գորիս	0	24	9
42	Կապան	0	69	0
43	Մեղրի	0	21	0
	Ընդամենը	28090	3897	567.5

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալները

- **Սևանի N5 կոյուղու պոմպակայանում** խափանվել էր պոմպերի աշխատանքը և կոյուղաջրերը ծածկել էին պոմպակայանի հատակը: Ձննման արդյունքում պարզվել է, որ պոմպերից մեկի շարժիչը այրվել էր, որն էլ տեղափոխվել է վերանորոգման: Խցանվել էին նաև հակադարձ փականները, որոնք ապամոնտաժվել են և մաքրվել:

- **Վարդենիսի կոյուղու պոմպակայանում** խափանվել էր պոմպերի աշխատանքը: Ձննման արդյունքում պարզ է դարձել, որ փսասվել է բանվորական անիվը և խցանել պոմպը: Բանվորական անիվը փոխարինվել է և պոմպը աշխատում է անխափան:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	79,799	41,4
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	85,726	30,6
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	156,011	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	163,211	21,6
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	120,631	19,8
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	21,939	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,995	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	25,254	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	29,800	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Այցերի քանակ	8
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	125
Էլեկտրական սարքերի զննում	15
Պոմպի վերանորոգում	0
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի տեղադրում	4
Եռաֆազ թողարկչի փոխարինում	1
էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Ապրիլ ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար ապրիլ ամսվա ընթացքում նորոգվել են թվով 12 մեքենայի շարժիչները մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 13 մեքենամեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիֆեր, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 20 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել է:

Փոխարինվել են թվով 56 մեքենամեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր:

Թվով 6 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:



Թվով 5 մեքենայի և էքսկավատորի համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, միացններ:

Վերանորոգվել են թվով 12 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Հիդրավլիկ համակարգի նորոգում է իրականացվել թվով 2 մեքենամեխանիզմի վրա, բարձր ճնշման մղիչներ:

Վերանորոգվել են թվով 6 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամումի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 4 մեքենամեխանիզմի վրա:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թիվին ավելացել է «Թալին» առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.05.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 337,144, իսկ ՄՏՍՍ-ում՝ 174,050 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. ապրիլ - 2020թ. ապրիլ ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	422,270	323,340	76,6
		Իրավաբանական անձ	19,957	13,804	69,2
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	196,385	167,561	85,3
		Իրավաբանական անձ	7,116	6,489	91,2
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	618,655	490,901	79,35
		Իրավաբանական անձ	27,073	20,293	74,96

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	466,830	389,612	83,5
		Իրավաբանական անձ	23,667	12,044	50,9
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,592	196,385	77,1
		Իրավաբանական անձ	10,128	7,116	70,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,422	585,997	81,23
		Իրավաբանական անձ	33,795	19,160	56,69

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 315 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 45 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում ապրիլ ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 39,214 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 10,8 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում, չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 9.927 բաժանորդով աճել է 16,213 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 5 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Ապրիլ ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 220, իսկ ՄՏՍՍ-ում՝ 272 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 05.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	136	63	9	208
		Իրավաբանական անձ	5	7	0	12
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	63	178	14	255
		Իրավաբանական անձ	7	9	1	17
	Ընդամենը		211	257	24	492

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում ապրիլ ամսվա ընթացքում փոխարինված 220 ջրաչափերի մոտ 36 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 272 ջրաչափերի մոտ 74 տոկոսը (կամ 202 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մոտավ 45,673 մ3, իսկ ՄՏՍՍ-ի՝ 4,975 մ3 վերահաշվարկված հատույթ (27.0 %՝ Երևան և 73 %՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հատույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թալին) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Ապրիլ ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1394,162 մլն դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 477,480 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Ապրիլ ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 14 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 1.5 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 6 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 472 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Ստորև բերված են ապրիլ ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործերը: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին.

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14.897.386
2	Ազատաշեն համայնք	12.511.000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11.440.944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114.597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2.680.006.883 ՀՀ դրամ:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.05.2020թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում ապրիլ ամսվա հասույթ (մլն դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,142.9	1,145.2
Բնակիչ-բաժանորդներ	3,105.0	814.9
Իրավաբանական անձեր	1,037.9	330.3
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,767.4	440.3
Բնակիչ-բաժանորդներ	1,355.1	355.1
Իրավաբանական անձեր	412.3	85.2
Ընդամենը, այդ թվում	5910.3	1.585.5
Բնակիչ-բաժանորդներ	4460.1	1170
Իրավաբանական անձեր	1450.2	415.5


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 187.5 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱՉԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.05.2020թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	453,265	388,535	85.7	22,983	12,039	50.9
	Առանց ջրաչափի	13,565	1,077	7.9	684	5	0.7
Մարզեր	Ջրաչափով	1,077	180,655	77.94	9,652	5,479	56.77
	Առանց ջրաչափի	21,243	1,264	5.95	241	3	1.24
Ընդամենը	Ջրաչափով	454,342	569,190	79.82	32,635	17,518	53.68
	Առանց ջրաչափի	34,808	2,341	6.73	925	8	0.86

Տվյալների բազայում 01.05.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	592,339	299,264	50.52	25,837	7,434	28.77
Մարզեր	264,689	72,987	27.57	10,754	2,003	18.63
Ընդամենը	857,028	372,251	43.44	36,591	9,437	25.79

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 488, իսկ մարզերում՝ 294 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 7, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 68 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2292	1860	81.1
գ.Պոռչյան	1537	1010	65.7
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5785	1738	30.0

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ապրիլ ամսին ջրաչափերի փոխարինման աշխատանքները շարունակվել են Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 6,892, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,539, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 736, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,260, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 760, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 786 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 753 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	39	30,379	5,143,119
Մարզեր	7	4,233	693,827
Ընդամենը	46	34,612	5,836,946

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի մարտ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.4%, ինչը 0.2 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:

Ջրամատակարարման շարունակականություն




Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 23 ՃԿՊ-ներ:

Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ձնշման լոգերների գրաֆիկները.




Երևան քաղաքը սնող ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2020թ-ի ապրիլ ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 260 լ/վ-ով, ինչի արդյունքում այդ նույն ջրաղբյուրներում ջրարտադրության համար հոսանքի ծախսն ևս նվազել է 86 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 24707 ԳՎտ.ժ. (5,15%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՑ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքրոցով յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է թվով 1 հասցե, և 1 հասցեում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնք ճշտագրվել են ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից: Թվով 1 հասցեում վերացվել է առաջացած վթարը, որի արդյունքում տնտեսվել է 500 ԳՎտ էլեկտրաէներգիա:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 5612,02 ԳՎտ.ժ կամ 38%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




Կատարված աշխատանքներ

Թվով 285 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 44 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

● Հինգ հասցեներում թվով 10 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 465,43 ԳՎտ/ժամ (4%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլ. էներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 11 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանուժներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


Մարտ ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 83,068 ԿՎտ.ժ կամ 10,61% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա




Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 67,050 ԿՎտ.ժ կամ 3,69%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 111,002 ԿՎտ.ժ կամ 3,06%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Նոր կետերի ավելացում՝ ֆիզիկական բաժանորդներ	հատ	37
Նոր կետերի ավելացում՝ իրավաբանական բաժանորդներ	հատ	10
Կառուցված ջրագծեր	մետր	435.8
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	520
Կառուցված կոյուղագծեր	մետր	3
Հայաստանի և Երևանի կոյուղագծերի վթարների թվայնացում	հատ	34
Հայաստանի 10 մարզերի և Երևան քաղաքի քարտեզների թարմացում	հատ	11
Երևան քաղաքի տեղամասերի կոյուղագծերի քարտեզների կազմում	հատ	11
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	13
Շենգավիթ համայնքի կոյուղագծերի թվայնացում	մետր	103984,723
Ապարան և Թալին քաղաքների կոյուղաքծերի թվայնացում	մետր	38,263
Ապարան քաղաքի տվյալների բազայի լրացում	հատ	1
ՀՀ մարզային լոգերների գոտիների թարմացում, քարտեզների ստեղծում ու տպում	հատ	278
Մոդելի պարզեցում, կմախքի ստացում՝ օգտագործելով smart pipe removal, smart pipe merging գործիքները:	հատ	1
Ընթացակարգերի մշակում ակտիվների կառավարման բազայի ստեղծման համար	հատ	1

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերվել են մի շարք վթարներ.

Արզնի 1, Արզնի 2

Ջրատարների վրա գոյություն ունեին վթարներ և որոշակի թերություններ: Հայտնաբերելուց հետո դրանց մի մասը վերացվել է ≈5լ/վ:



Գառնի-Արարատ

Ջրատարի վրա հայտնաբերվել են վթարներ, իսկ Ջրամբար գյուղի տարածքում՝ անհայտ միացումներ: Դրանք վերացվել են շահագործման տեղամասերի կողմից:



Ապարան-Երևան

Հերթական շրջայցի ժամանակ ջրատարի վրա՝ ջրամբարի տարածքում, հայտնաբերվել է վթար և անհայտ միացումներ, որոնք վերացվել են:



Շոր-Շոր

Շոր-Շոր սանիտարական գոտում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կատարվելիք շինարարական աշխատանքների արդյունքում բարելավվել է պ/կ-ի հասանելիությունը:

Ղազարավանի խ/հ

Ջրատարի վրա առաջացել էր վթար՝ ≈ 20 լ/վ, որը կապված էր օդահեռ փականի վնասվելու հետ: Այն վերացված է:



3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● 2020թ-ի ապրիլ ամսվա ընթացքում գոտիավորման բաժինն իրականացրել է լայնածավալ աշխատանքներ, որոնք ընդգրկել են ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ Արմավիր, Աշտարակ, Էջմիածին, Իջևան, Վանաձոր, Սևան, Գավառ, Գյումրի, Արարատ, Ջոդ և Կապան քաղաքներնեի ջրամատակարարման ցանցերը:


● Գառնի ջրատարից սնվող Արարատ, Ջոդ, Սուրենավան, Արմաշ և Երասխ համայնքների ջրամատակարարումը բարելավելու, ջրաքանակները խնայելու, հաճախակի կրկնվող վթարները բացառելու, շահագործման ծախսերը կրճատելու նպատակով ապրիլ ամսին ևս կատարվել են լայնածավալ գոտիավորման աշխատանքներ: Արարատ քաղաքում հայտնաբերվել և տեղամասի կողմից վերացվել են 7 հատ վթարներ՝ ընդհանուր $Q=9.6$ լ/վ ջրաքանակով:

● Ընտրված 24-ժամյա ջրամատակարարում ունեցող որոշ գոտիներում տեղադրվել են գիշերային ծախսաչափեր՝ հասկանալու համար ջրի բաշխման բալանսը և գաղտնի վթարների առկայությունը: Ուսումնասիրվում են նաև գոտիների գլխամասերում տեղադրված և Locator համակարգին միացված էլեկտրոնագնիսական ծախսաչափերի տվյալները: Այդ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և տեղամասերի կողմից վերացվել են 134 հատ գաղտնի վթարներ՝ խնայելով 221,6լ/վ ջրաքանակ: Արդյունքում բարելավվել է բազմաթիվ թաղամասերի ջրամատակարարումը, և վերացվել են բաժանորդների ջրի ճնշումների հետ կապված բողոքները: Աշխատանքներն ամբողջությամբ արտացոլվել են SMART MONITORING & STRATEGY համակարգում:

Երևանի «Ազատություն» գոտու Ազատության նրբ-ի գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևանի «Ազատություն» գոտու Ուլենցի փող-ի գիշերային ծախսաչափի տվյալներ



Երևանի «Ազատություն» գոտու Դրո փող-ի գիշերային ծախսաչափի տվյալներ



Սևան քաղաքի «Ցամաքաբերդ» թաղ-ի գիշերային ծախսաչափի տվյալներ



● Գիշերային ծախսաչափերի տեղադրման և առավել խոշոր արդյունքներ արձանագրած աշխատանքներն ամփոփ կերպով ներկայացված են ստորև զետեղված աղյուսակում:

աղյուսակ 7

Հ/Հ	Գոտու անվանում	Ենթագոտի	Տեղադրված գիշերային ծախսաչափի հասցե	Վերլուծության արդյունք	Հայտնաբերված / վրացված վթարների քանակ	Խնայված ջրաքանակ (լ/վ)	Նշումներ
1	Սևան - Ցամաքաբերդ	Ցամաքաբերդ 1	ՕԿՋ-ի մոտ	0.2-0.5լ/վ վթարի առկայություն	1	0.2	Վթարը վերացված է
2	Երևան, Զեյթուն «Ազատություն»	Ազատության նրբ	Ազատության և 8 շենք	0.5-0.7 լ/վ վթարի առկայություն	2	0.6	Վթարը վերացված է
3		Ուլնեցի	Ուլնեցի- Պ. Սևակ խաչ	6 լ/վ վթարի առկայություն	1	6	Վթարը վերացված է
4	Երևան Զեյթուն «2-րդի տրանզիտ»	Դրո	Դրո - Պ. Սևակ խաչ	1-2 լ/վ վթարի առկայություն	2	1	Վթարը վերացված է
6	Երևան -15 թաղամաս	Մազմանյան փողոց-	Մազմանյան 8 շենքի մոտ	1-2լ/վ վթարի առկայություն	1	2	Վթարը վերացված է
7		Նոր թաղ.	Միլիկյան նոր խճ - Աշտարակի խճ. Խաչ	1լ/վ վթարի առկայություն	1	1	Վթարը վերացված է

Գոտիավորման բաժինն էներգովերահսկողության խմբի հետ աշխատանքներ է իրականացնում նաև Երևան քաղաքի այն պոմպակայաններում, որտեղ հոսանքի գիշերային ծախսերում նվազում չի նկատվում: Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի չափիչների արդյունքները էներգովերահսկողության խմբի աշխատակիցների կողմից ներկայացվում են պոմպակայանի հասցեներ: Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրվում են այդ պոմպակայանների ջրամատակարարման սխեմաները, որի արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ: Այդ հասցեների և հայտնաբերված վթարների ջրաքանակները ներկայացված են ստորև:

աղյուսակ 8

Հ/Հ	Պոմպակայանի հասցե	Հայտնաբերված վթարի ջրաքանակ
1	Արցախի 6	4.5
2	Ն. Շենգավիթ 11 փ 39/1	0,3
3	Բաղրամյան 1 անց. 14	2.2


Տարբեր տեղամասերում եղած խնդիրները հասկանալու, եղած ավելցուկային ճնշումները կառավարելու և ջրաքանակները խնայելու նպատակով տնօրենի և տեղամասի պետի հետ իրականացվել են համատեղ քննարկումներ, որի արդյունքում տեղադրվել են նաև ճնշման լոգերներ գիշերային ծախսաչափեր բարձրացված խնդիրներին լուծում տալու համար:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Ապրիլին չեն մոռացվել հանրային հնչեղությունն ունեցող մյուս իրադարձությունները: Այսպես, ապահովվել է համապատասխան հրապարակում Հայոց Ցեղասպանության 105 ամյա տարելիցի առթիվ, տնօրինության անունից շնորհավորական ուղերձ է հղվել կանանց Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, պարգաբանումներ են ներկայացվել ՋԼՄ-ներում հրապարակումների վերաբերյալ: Առանձնահատուկ նշանակություն ունի այս առումով ջրամատակարարման հերթական գրաֆիկի հրապարակումը՝ առաջիկա ամիսների համար, որն իրականացվեց ՀՀ ՀՕԿՀ-ի սահմանած կարգով ու ժամկետներում: Նաև կարևոր էր հնարավորինս արագ արձագանքը Վանաձորի որոշ թաղամասերում գետերի վարարումների պատճառով առաջացած ջրամատակարարման խնդրի մասին:

Հասկանալի է, որ այս ընթացքում շարունակվել են նաև հրապարակվել ջրանջատումների, տարատեսակ մրցույթների, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունը: Այս ամենը իր տեղն է գտել ոչ միայն ֆեյսբուք սոցիալական ցանցում, այլև ընկերության պաշտոնական կայքում, ուղարկվել է տասնյակ լրատվամիջոցների, ինչպես նաև այդ մասին շարունակաբար իրագեկվել են ՀՀ ՀՕԿՀ-ն, ՀՀ ՏԿԵՆ-ն, Ջրային կոմիտեն, մյուս պատկան մարմինները:



ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



5.1. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ


● Ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիք աշխատանքների վերաբերյալ էլեկտրոնային գրությամբ համապատասխան տեղեկատվություններ է փոխանցել ՀՀ Ջրային կոմիտե:

● Միաժամանակ ՈԱԱ Ծառայությունը Ընկերության Ղեկավար կազմին և ստորաբաժանումների պատասխանատուներին իրազեկել է Պարետի ընդունած որոշումների վերաբերյալ:

● ՈԱԱ Ծառայությունը իրազեկել և հրահանգել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելմանն ուղղված անվտանգության կանոնների իրազեկման թերթիկի և վերջինիս Ընկերության գրասենյակների տեսանելի վայրերում կիրառման մասին:

● ՈԱԱ Ծառայությունը ՄՌՄ բաժնի հետ համատեղ օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19 -ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին:

Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ



● Պետք է նշել, որ պայմանավորված Ընկերության աշխատողների շրջանում կորոնավիրուսի համավարակի տարածման կանխարգելման անհրաժեշտությունից՝ ՈԱԱ Ծառայությունը ժամանակավորապես դադարեցրել է ստուգայցները և դասընթացները:

● Ներկայումս մշակվում են հեռավար դասընթացների կազմակերպման ձևաչափերը:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

6.1. Համակարգչային ցանց

Ապրիլ ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Տեղադրվել և կարգավորվել է WSUS սերվեր՝ Microsoft ծրագրային ապահովման տարբեր տարբերակների թարմացումների կենտրոնացված տեղադրման և կառավարման համար:
- Տրամադրվել են նոր օգտանուններ VPN-ով աշխատելու արտոնություններով՝ օգտատերերի տանից աշխատանքն ապահովելու համար:
- Թարմացվել է Kaspersky հակավիրուսային համակարգի սերվերային ծրագրային ապահովման տարբերակը:
- Մեկնարկվել է Kaspersky հակավիրուսային համակարգի թարմացումն ընկերության բոլոր սերվերների և համակարգիչների վրա:
- Մեկնարկվել է նոր անվտանգության SIEM համակարգի թեստավորման փուլը՝
 - ▶ Ստեղծվել է նոր վիրտուալ սերվերների հավաքածու՝ OSIEM SIEM համակարգի տեղադրման համար
 - ▶ Տեղադրվել է OSIEM համակարգը բոլոր անհրաժեշտ մոդուլներով
 - ▶ Առանձնացվել են համակարգիչներ և սերվերներ՝ թեստավորման գործընթացների համար:
- Իրականացվել են Linux օպերացիոն համակարգով գործող սերվերների թարմացումներ:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Ապրիլ ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

● Մշակվում է նոր հարթակ՝ տեխպայմանների գործընթացն ամբողջությամբ ապահովելու և բաժանորդի սպասարկման որակը բարելավելու ուղղությամբ: Նոր հարթակը թույլ կտա կառավարել բաժանորդի դիմումից սկսած մինչև բաժանորդ դառնալու գործառնությունները, ինչպես նաև բաժանորդը կկարողանա առցանց եղանակով դիմումներ և պահանջվող փաստաթղթեր ներկայացնել, տեղեկանալ գործի ընթացքի մասին:

- Ակտեր:

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառնություններ) Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառնությունը համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է ապրիլ ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Խոչընդոտման արձանագրություն			
Տեղամաս	Շտաբներ		
	քանակ	հազ խ/մ	մլն դրամ
Հրամիս	1	1.55	0.24
Էրեբունի	3	2.25	0.34
Կենտրոն	2	1.87	0.32
Արարիկ	1	0.37	0.07
Շահումյան	2	0.77	0.13
Քանաքեռ-Զեյթուն	4	1.79	0.27
ԶԿԲ	10	4.21	0.70
Շիրակ	1	1.55	0.28
Հրազդան	1	1.55	0.28
Շտաբներ	25	15.90	2.62

Տեղամաս	Լաբորատորիա			
	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ խ/մ	քանակ	հազ խ/մ
Հրամիս	4	1.03	22	0.19
Էրեբունի	11	7.53	31	0.16
Շենգավիթ	7	3.24	60	0.87
Կենտրոն	5	4.08	45	0.37
Արարիկ	6	1.40	34	0.27
Մաշտոց	6	2.51	40	0.21
Շահումյան	10	3.80	19	0.12
Քանաքեռ-Զեյթուն	7	8.84	54	0.75
ԽՈՇՈՐ	0	-	1	0.10
Լոռի	0	-	3	0.03
Արթիկ	1	0.52	8	0.05
Արարատ	6	1.18	29	0.26
Արմավյան	3	3.97	-	-
Հրազդան	3	0.55	12	0.14
Ալավերդի	0	-	10	0.06
Աշոցք	0	-	1	0.00
Արտաշատ	0	-	4	0.01
Բերդ	0	-	1	0.03
Գավառ	0	-	17	0.12
Դիլիջան	1	0.52	4	0.01
Էղեգնաձոր	0	-	4	0.02
Էջմիածին	2	0.77	13	0.11
Թալին	0	-	5	1.20
Կապան	0	-	1	0.00
Ճամբարակ	0	-	1	0.01
Մասիս	2	0.69	3	0.02
Արմավիր	5	1.42	32	0.18
Զեյթուն	0	-	1	0.00
Չարենցավան	4	1.01	26	0.16
Մլխիան	2	0.52	18	0.32
Մայիտակ	2	0.26	41	0.15
Ստեփանավան	1	0.52	10	0.05
Տաշիր	0	-	7	0.07
Շտաբներ	88	44.33	557	6.05



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am